ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 մայիսի 2025 թվականի N 0602-Ա

ՀԱՅԿ ՌԱՖԻԿԻ ԱԲԳԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետով, հիմք ընդունելով քաղաքացի Հայկ Ռաֆիկի Աբգարյանի 2025 թվականի ապրիլի 15-ի թիվ 1943 դիմումը և Արմավիր համայնքի ավագանու 2025թ ապրիլի 25-ի թիվ 061-Ա որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1 . Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լենուղի գյուղում գտնվող Հայկ Ռաֆիկի Աբգարյանի սեփականություն հանդիսացող 04-044-0186-0008 կադաստրային ծածկագիր ունեցող 0. 4199 հա մակերեսով հողամասից 0. 0526 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության կորիզավոր հողամասը փոխադրել՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի՝ գյուղատնտեսական արտադրական, օբյեկտների գործառնական նշանակության հողամասերի՝ գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսություն կառուցելու համար:

2. Կատարել համապատասխան փոփոխություն՝ Հայաստանի Հանարպետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լենուղի գյուղը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արմավիր-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2025թ. մայիսի 07
ք. Արմավիր